

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՂՈՎՈՒՄՆ ՕՐԻՆԱՑԸ»
ԻԲՐԵՎ ՕՐԻՆԱԿ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ**

ՀՈՒՐԵՐՏ ԿԱՌԻՑՀՈՒԴ (Մյունխեն)

**Ա) Ընդհանրապես բյուզանդական օրենսդրերի հայերեն
թարգմանությունների շուրջ**

1. Իրավական բովանդակությամբ հայերեն ձեռագրերում հանդիպում են ոչ միայն աշխարհի հայտնի իրավական հուշարձաններ ինչպիսիք են «Կանոնադիրք Հայոց»-ը, Դավիթ Գանձակեցու (XII դար) Դատաստանադիրքը, Մխիթար Դոդի (1130/40 մինչև 1213) «Դատաստանադիրքը», վերջինիս վրա հիմնված Սմբատ Սպարապետի (+ 1276) երկը, այլ նաև նույն Սմբատի ֆրանսերենից թարգմանած «Անտիոքի Աստիզները»¹, ինչպես նաև բյուզանդական ծագման մի քանի օրենսդրքեր:

Բյուզանդական ծագում ունեցող այս օրենսդրքերը բավական համախումբ են ավանդված հայկական ձեռագրերում: Խոսքը վերաբերում է հետևյալ բնագրերին².

ա) Ասորա-հռոմեական դատաստանադիրք

բ) «Համառոտ ժողովումն օրինաց» (Sententiae Syrlae)

գ) Հին կտակարանային քաղվածքներ (Nomos Mosailkos)³

¹ Դրանց հրատարակություններն ու պատկանությունը տես L. Burmann—H. Kaufhold (unter Mitwirkung von A. Lozo en und anderen), Bibliographie zur Rezeption des byzantinischen Rechts im alten Europa sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts, Frankfurt am Main, 1992, S. 69—187 («Armenien»).

² Տե՛ս հոտանագրում J. Karst, Grundriß der Geschichte des armenischen Rechts, «Լ» Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft 19 (Stuttgart, 1906) S. 313—411, 20 (1907), S. 14—112, 343—347. Ն. Ակիսյան, Ակնարկ մը հայ իրավանց պատմության վրա և Հ. Կարստի նոր երկասիրությունները, տե՛ս Հանգես Ամսորյա, 22 (1908), 40 (ընդարձակ տեղեկություններով), նույնի, ներսես խմբրոնացի, Վիեննա, 1956, էջ 244—246, 256—265 (=Հանգես Ամսորյա 68 [1954], էջ 188 և հտ., 195—200); G. Amaduni, L'influsso del diritto giustiniano sul diritto armeno, տե՛ս Acta congressus juridici internationalis Romae 1934, vol. 2, Roma 1935, էջ 226 և հտ., J. Mécérian, Note sur les documents juridiques arméniens d'origine romano-byzantine, «Լ» XIIIe Congrès International des études byzantines Ochride 1901. Résumé des communications, Belgrade—Ochride 1901, էջ 67—69, H. Kaufhold, Zur Übernahme byzantinischer Rechtslehre durch die Armenier, «Լ» Հանգես Ամսորյա 90 (1976), էջ 681—681; A. Bozoyan, Les documents juridiques du royaume Arménien de Cilicie, տե՛ս Actes du colloque «Les Lusignans et l'Outre Mer», Poitiers—Lusignan 1993, էջ 64—68.

³ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս L. Burmann—S. Troianos, Nomos Mosailkos, տե՛ս Fontes Minores hrsg. von D. Simon, B. 3, Frankfurt am Main, 1979, էջ 126—167.

դ) Կոստանդին և Լեոն կայսրերի 726 թ. հրապարակած «էկլոգան»⁴
 ե) էկլոգայի հավելվածները⁵ և կայսրուհի Իրինեի երդման մասին նո-
 վելը⁶

զ) Զինվորաց օրենսդիրքը (Nemos Stratotikos):

Առաջին երկուսը հունարենով չեն պահպանվել, և ասորերենից են թարգ-
 մանված հայերեն, իսկ մնացածները հիմնականում գտնվում են նաև հու-
 նարեն ձեռագրերում⁷, և ուղղակիորեն հունարենից են թարգմանված:

2. Հայերեն բնագրի եղած հրատարակություններն անբավարար են: Հո-
 մեական իրավունքի հուշարձան «Ասորա-հոմեական օրենսգիրքը» հայտնի
 է միայն ասորերեն թարգմանությամբ: Ավելի ուշ հայտնի դարձան հետագա
 ասորերեն տարբերակները, ինչպես նաև արաբերեն, հայերեն և վրացերեն
 թարգմանությունները: Հայկական տարբերակի բնագիրը երիցս հրապարակ-
 ված է, դրանք բոլորն էլ հիմնված են սոսկ մի քանի ձեռագրերի վրա⁸: «Հա-
 մառոտ ժողովումն օրինաց վերստին»-ը հրատարակված է հատվածաբար.
 օգտագործված ձեռագրում բնագիրը բաժանված է 56 պարագրաֆի, իսկ վեր-
 ջում դրված են հինկտակարանային որոշումներ, ինչը չի նկատել հրատարա-
 կիչ Կ. Բասմաջյանը⁹: Զինվորաց օրենսգիրքը ևս հրապարակված է Բասմաջ-
 յանի կողմից բավական ազատ ձեռագրական հիմքի վրա¹⁰:

Հովսեփ Կարստր իր «Հիմունք Հայոց իրավունքի պատմության» (1906)
 երկում խոստանում է հրապարակել բոլոր այս բնագրերը: Սակայն այդ խոս-
 տումը չկարողացավ իրականացնել: «Համառոտ ժողովումն»-ի բնագիրը լույս
 կտեսնի 1997 թ. Հուրերա Կառնիստի աշխատասիրություններ, Մայնի Ֆրանկ-
 ֆուրտի «Forschungen zur byzantinischen Rechtsge-
 schichte» շարքում: էկ-
 լոգայի և Զինվորաց օրենսգրքի բնագրերն էլ կաղմում են Բերնարդետ Մար-
 տին-Հիդարը և Ազատ Բողոյանը:

3. Այս օրենսգրքերի թարգմանությունը կատարել է Ներսես Լամբրոնա-
 ցին (XII դար), որը բացի մայրենի լեզվից դիտեր նաև հունարեն, լատինե-
 րեն և ասորերեն¹¹: Ներսես Լամբրոնացու թարգմանությունների մասին վկա-

⁴ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս L. Burgmann. Ecloga. Das Ge-
 setzbuch Leons III. und Konstantinos' V. Frankfurt am Main, 1983.

⁵ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս L. Burgmann—Troianos. Appendix
 Eclogae, տե՛ս Fontes Minores III, նույն տեղում, էջ 24—125.

⁶ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս L. Burgmann. Die Novellen der
 Kaiserin Eirene. տե՛ս Fontes Minores IV, hrsg. von D. Simon, Frankfurt am Main,
 1981, էջ 1—36 (Eidnovelle, 16—25).

⁷ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս W. Ashburner. The Byzantine Mu-
 nity Act, տե՛ս Journal of Hellenic Studies, vol. 46, 1926, էջ 80—109 (=J. und P. Ze-
 pos. Ius Graecoromanum II, Athen, 1931, 91—103): Հաջորդ հրատարակու-
 նությունները տե՛ս Burgmann—Troianos. Appendix Eclogae, նույն տեղում, էջ 30, ծան. 27:

⁸ Տե՛ս Burgmann—Troianos. AppEcl, էջ 30—40, 78—84, նույն հեղինակ-
 ների՝ Nom.Mos, էջ 126, 133—135.

⁹ K. G. Bruins und E. Sachau. Syriisch-römisches Rechtsbuch aus dem fünften
 Jahrhundert. Leipzig 1880, S. 95—141 (բնագիրը), էջ 115—150 (թարգմանու-
 թյունը), Կ. Բասմաջյան. Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացու ըստ Կոստանդինոսի, Թեո-
 դոսի և Լեոնի թագավորաց հոռվմայնցվոց. Պարիզ, 1907: Ա. Ղլտճյան. Ասորական դա-
 տաստանագիրք, ս. էջմիածին 1917:

¹⁰ Հայկական օրենք Կիլիկիցվոց. Համառոտ ժողովումն օրինաց վերստին, տե՛ս Քանա-
 սեր 9 (Պարիս, 1907), № 1, էջ 14—17:

¹¹ Զինվորական օրենք Ներսիսի Լամբրոնացու, տե՛ս Քանասեր 4 (Պարիս, 1902), թ.
 11, էջ 321—328:

¹² Նրա կենսագրության մասին հատկապես տե՛ս Ա. Կիլիկյան. Ներսես Լամբրոնացի.
 M. Ashjian. St. Nerses of Iambros. Chap on of the Church Universal, New
 York, 1993.

յություններ են պահպանել մի շարք ձեռագրեր¹³։ Դրանցից մեկը պահպանվել է սի իրավարանական ժողովածուում, որն ավելի վաղ գտնվել է Մարաշում, սակայն որի պահպանման վայրը այսօր հայտնի չէ։ Այն տեղեկացնում է. «Շումս քահանայապետությանն Հայոց Կրիզոստոսի... թուին Ուխիլ=1193]... եւ պատահեալ անդ յասորոց Թեոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեառնս զի զոյր առ ինքն այս համառաւ աբինալորութիւնս, եւ իրաւման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ ներսեսի յեղաշրջեցաւ ի Հայս, նմին յիշատակ բարի։ ...Յետ որոյ ապա եւ ի հելլենացւոց զրոց արարի Թարգմանութիւն մովսիսական աւրինացդ եւ Լեոնի եւ Կոստանդեայ աւրինացդ, ի նմանէ Թարգմանեցի եւ զգինուտական աւրինացդ»¹⁴։

4. Բերված վկայության մեջ հիշատակված երկերը ղեկավար չէ նույնացնելու Այստեղ ամենայն հավանականությամբ հիշատակվում են «Համառոտ ժողովումն օրինացը»-ը, Մովսիսական օրենսգրքը, Լեոնի և Կոստանդինի էկզոդան (հավելվածների հետ միասին) և Զինվորաց օրենսգրքը։

ա) «Համառոտ աւրինագրութիւն»-ով, ինչպես իրավացիորեն կոհանել է Հ. Կարստը¹⁵, նկատի չեն ունեցել Ասորահռոմեական օրենսգրքը, որը հատկապես «Հոռմի կայսրեր Կոստանդինի, Թեոդոսի և Լեոնի օրենք» վերնադիրն է ստացել, սակայն հայկական ձեռագրերում այն հայտնի է «Համառոտ ժողովումն աւրինացս վերստին» խորագրով, խոսքը հայտնի «Sententiae Syriacae»¹⁶ բնագրի մասին է, որը հայտնի չէ հունարեն բնագրով, իսկ ասորերեն բնագիրը միայն վերջերս հայտնի դարձավ, ինչը Կարստը դուռն չէր կարող իմանալ։ Ասորերեն և հայերեն բնագրերի նույնությունը ես արդեն անդրադարձել եմ 1976 թ.¹⁷։

բ) Ասորահռոմեական օրենսգրքը հիշատակության մեջ չկա։ Քանի որ այն սովորաբար արևմտաստորական կանոնական ժողովածուներում ուղեկցում է «Համառոտ ժողովումն»-ին (Sententiae Syriacae)¹⁸ և բացի այդ նաև սերտորեն զրվում և հանդիպում է հայերեն այլ բնագրերի հետ, ապա ներսերը հայերեն է թարգմանել ոչ միայն «Համառոտ ժողովումն»-ը, այլ միաժամանակ նաև Ասորահռոմեական օրենսգրքը։ Այն որպես կանոն, ինչպես նաև համառոտ տարբերակներում, վերնագրված է. «Աւրինք յաղթող Թաւադորայ բրիտանիայի Կոստանդինոսի եւ Թեոդոսի եւ Լեոնի Թագաւորաց հովմայեցոց»։ Այն ղրկվել է ճշգրիտ թարգմանությունն է ասորական Դամ տարբերակին¹⁹։

¹³ Հմմտ. հան B. Martin-Hisard, la version arménienne de l'École de Leon III, տե՛ս Revue des Etudes Arméniennes. N. S. 21, Paris, 1988—1989, էջ 156 և հտ.։

¹⁴ Հայերեն բնագիրը տե՛ս Գ. Զարհուրյան, Մատենադարան Հայկական Թարգմանությանց նախնայոց, Վենետիկ, 1889, էջ 754 և հտ.։ Ն. Ակիսյան, Ակնարկ, նույն տեղում, հ. 32, էջ 39, նույնի՝ ներսես Լամբրոնացի, էջ 246 և հտ. Գաղիկոն Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիպաս, 1951, էջ 599—602, և. 2. Տեր-Պետրոսյան, Ասորիների ղերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԹ—ԺԳ դարերում, տե՛ս «Ռազմավեպ» 145 (1987), էջ 149 և հտ.։

¹⁵ Grundriss, I, § 339, Կարստի փաստարկները հետադուրում (Ակիսյան, Ակնարկ, էջ 39; An ad uni. Einfluss, p. 242, Mécérian, Noe, p. 69 և Տեր-Պետրոսյան, էջ 159 և հտ.) չեն արածել Ասորահռոմեական օրենսգրքի վրա։

¹⁶ Kaullold Zur Übernahme Lyantistikter, նույն տեղում, էջ 663 և հտ.։

¹⁷ Հմտ. H. Kaullold, Die Überlieferung der Sententiae Syriacae und ihr historischer und literarischer Kontext, տե՛ս D. Simon. (Hrsg.), Akten des 26. Deutschen Rechtshistorikertages 1986, Frankfurt am Main, 1987; W. Selb, Sententiae Syriacae Wien, 1990, p. 18—27։

¹⁸ Խոսքը վերաբերում է Դամասկոսի ուղղափառ-ասորիների պատրիարքության 8/11 ձեռագիր տարբերակին։ Այդ ընդօրինակությամբ պահպանված Ասորահռոմեական օրենսգրքի

դ) Nomos Mosaikos-ի կարգավորումները անկասկած կրկնված են Մովսիսական օրենքք-ում: Դրա հունարեն վերնագիրն է. 'Εξιστορησας: Αγιος Θεωδωρος Μωυσαϊκός: Եւթ. 'Ιστορησας: Այս վերնագիրը հայերեն ձեռագրերով մեզ չի ավանդվել: Այստեղ բնագիրը շատ անգամ սովորույթի համաձայն վերնագրվել է «Գլուխք ընտրութեամբ (կամ՝ ընտրութեան) ի մովսիսական արինացն»: Այս դեպքում խոսքը վերաբերում է հետևյալ վերնագրի արտացոլմանը. Κεφαλαιον των επιλογων των μωυσαικων παραγγελλων¹⁹:

Ձեռագրական մի այլ խումբ բավական շեղվում է այս վերնագրից և մոտենում է հունարենին. «Արէնք աստուածադիրք ի ձեռն Մովսէսի»: Սակայն այս երկու խմբերում ամբողջովին տարբեր է ոչ միայն վերնագիրը, այլ նաև հինկտակարանային բնագրերի կազմը: Երկրորդ խմբի հայկական ձեռագրերը պարունակում են ոչ թե հունական Nomos Mosaikos-ը, այլ քաղվածքներ Ելք և Ղևտական գրքերից, որոնց աստվածաշնչային հերթականությունը հետևյալն է. Ելք 21. 2—4, 7—10, 12—17, 21. 12—16, 2—11, 18—27, 22. 1—3, 21. 18—36, 22. 4—30, 23. 1—9, Ղևտական 18, 6—25, 19. 9—15: Կազմողը ակնհայտաբար ստեղծել է այս խմբի ձեռագրերում Մովսիսական օրենքների մի այլ բնագիր, միևնույն վերնագրի տակ, որը հիշեցնում է հունարեն բնագիրը, Հին կտակարանից մի այլ ընտրություն է կատարել: Մի այդպիսի բնագրի կազմումը այնքան էլ դժվարին գործ չի եղել²⁰:

Բացի այդ, ինչպես գիտենք, Nomos Mosaikos-ը, հինկտակարանային իրավաբանական վարվելաձևի առանձին քաղվածք չէ: Պետք է հիշել լատինական «Collatio legum Mosalarum et Romanarum»-ի ինկտակարանային հիմքը: Մեկիտենների և դպտինների արաբական իրավական ժողովածուները ևս պարունակում են մի տարօրինակ բնագիր՝ «Կանոնադրություններ Հին Կտակարանի» վերնագրով, ուր Ելքի 31, 32, Ղևտականի 12, 15, 19—22, 25, 27, Թուոց 5, 6 և Երկրորդ օրինաց 11 ինչպես նաև 20—28 գլուխները մասամբ վերամշակվել են քրիստոնեության տեսանկյունով, սակայն պահպանելով աստվածաշնչային բովանդակությունը:

Վախթանգ VI թագավորի վրացական իրավաբանական ժողովածուն, որին դեռևս կանդորադանանք, պարունակում է նաև քաղվածքներ Հին Կտակարանից: Սրանից կարելի է ենթադրել, որ այն մոտ է Nomos Mosaikos-ին: Փաստորեն դրանք բխում են Երկրորդ օրինացի 5, 16—21 և 13—27 գլուխներից: Այդ բնույթի գործերը ըստ երևույթին ընդունված էին: Իսկ թե ի՞նչ նպատակ ունեին, դժվար է ասել:

դ) «Լէոնի եւ Կոստանդեայ արէնք»-ի հիմքում իսկ ակնհայտորեն ընկած է Բյուզանդական կայսրեր Լևոն III-ի և Կոստանդին V-ի էկլոգայի հունարեն բնագիրը: Հայկական ձեռագրերը պարունակում են երկու վերնագիր: Մեկը դրված է ներածությունից առաջ, մյուսը՝ բուն բնագրից առաջ: Վերջինն էլ, երբ անտեսում ենք մանր տարբերակները, ամբողջովին նույնն է: Հունարեն և հայերեն տարբերակները դնենք կողք-կողքի.

տարբերակի հրապարակումը և թարգմանությունը տե՛ս A. Wöbhus. The Synodicon in the West Syrian Tradition, II, Louvain 1976 (=Corpus Scriptorum Christianorum Orientalium 375, 376). p. 106—157: Ասորա-հռոմեական օրենսդրի հայերեն տարբերակի նոր քննակալ հրատարակությունը թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով պատրաստել են Վ. Զեյբը և Հ. Կառնֆոլդը:

¹⁹ Burgmann-Troianos. Nomos Mosaikos, նույն տեղում, էջ 138:

²⁰ Մի նման բնագիր (Ելք 20, 22 կամ 23, 23) հրապարակել էր արդեն Կարստը ըստ Վենետիկի Մխիթարյանների 107 մատյանի, տե՛ս J. Karst. Sempadscher Kodex oder Mittelarmenisches Rechtsbuch, Strassburg, 1905, S. 221—223, հիմա, նաև նույն տեղում, ներածություն, էջ IV, XXXI և հա.:

Դիւտի	Հնարութիւն
Դոյն յոթան	(Համառուտ
Եւ յոյժուալ շնորհսն	յարինացն քաղաքականաց)
Եւ յոյժուալ շնորհսն	Լիւծնի եւ
Կոստանդնուս	Կոստանդնուս
Կոստանդնուս	Իմաստուն եւ
Կոստանդնուս	Բարեպաշտ
Կոստանդնուս	Ղորոյ եւ
Կոստանդնուս	(մեծն Յուստինիանոս
Կոստանդնուս	նորոգեաց)
Կոստանդնուս	զկարգն...

Իրկու հիշատակված դեպքերում էլ հայերեն թարգմանիչը փոխել է բառերի տեղը, «Institutionen», «Diegesien», «Loci» և «Nomen» հասկացություններով ըստ երևույթին չէր կարող որե՛է բան սկսվել, այնպես որ այն փոփոխել է ըստ իր հայեցողության:

դ) Հիշատակարանում հատուկ նշում չունենք հայերեն բնագրի մասին, որը հունարեն ձևագրերում հայտնի է որպես էկլոգայի հավելված (Ἀρρεναιχ ἐπιόγα), ինչպես օրինակ հետևյալ վերնագրում. «Արինադրութիւն Նոինեալ թաղութիւն մար Կոստանդնուս վասն զգուշանալոյ երգմանց ըստ պատուական տեառն հրամանի» կամ «վասն աստիճանաց ազգականութեան»: Հայերեն թարգմանիչը հաշվի է առել հավանաբար էկլոգան, այնպես որ կարիք չի ունեցել որե՛է հատուկ հիշատակման: Ամեն դեպքում դրան հակառակ ոչինչ չի ասվում, քանի որ ներսես Լամբրոնացին դրանք էկլոգայի հետ միասին է թարգմանել:

է) «Ձինուորաց արէնք» հիշատակությունը բնականաբար Nomos Stratiotikos-ին է: Իրանք կրում են, ըստ մի շարք ձևագրերի, հետևյալ վերնագիրը. «Սահման(ք) զինուորութեան հաստատութեան եւ ահարկութեան՝ ի քաղաքական արինացն կարգէ»:

5. Հոռոմեա-բյուզանդական ոլորտից սերող իրավական բնագրերը ավանդված են բազմաթիվ հայերեն ձևագրերով, որոնք անշուշտ ոչ միշտ են պարունակում բոլոր բնագրերը: Հոռոմեա-ասորական դատաստանագրքից, որին անդրադարձանք վերևում, հայտնի է մոտ 60 ձևագիր: Այս բնագիրը պարունակում են հետևյալ մատենադարանների ձևագրերը.

Արմաշի վանքի մատենադարան. № 28,

Բեռլինի պետական գրադարան. № 56,

Ջամատի (Լիբանան) հայ-կաթողիկե վանք. № 180, 183, 467,

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան. № 209, 485, 407, 488, 556, 706, 778, 795, 1887, 2593, 2635, 2655, 2750, 2776, 2880, 2885, 2886, 3059, 3276, 3291, 3497, 3562, 3788, 5574(*), 6144(*), 6398, 6496, 6890, 7580, 7615, 8101, 8103, 8245, 8926, 8938, 9513, 10311,

Երուսաղեմի հայկական պատրիարքարան. № 157, 182, 805, 1183, 1870, 2911, 3308, 3395,

Նոր Զուղա (Իրան). № 61,

Օքսֆորդի Բոդլյան Մատենադարան. Ar. 61,

Փարիզի տղային մատենադարան. Ar. 177,

Սահասարյան վարժարան. № 47,

Վենետիկի մխիթարյան վանք. № 101, 214, 368, 434, 451, 890, 993, 1223, 1373, 1449, 1630, 1738, 2. Քյուրտյանի հավաքածու № 87,

Վիննայի մխիթարյանների վանք. № 579, 581, 582, 1118,

13 «Հանդես», № 2

կույս թարգմանված է հայերենից: Դատաստանագրքի՝ կողքին, սակայն, դանում ենք միայն Ասորահոռոնական դատաստանագրքը: Ուշինչ հայտնի չէ «Համառոտ ժողովումն»-ի (Sententiae Syriacae) վրացերեն թարգմանության մասին: Արդյո՞ք Վախթանգը օգտագործել է մի այնպիսի հայերեն ձեռագիր, որի մեջ եղել են միայն այս երկու երկերը, թե՛ նա ինչ-որ ընտրու-
 Յություն է կատարել, անհնար է պարզել:

Բ) «Համառոտ ժողովումն օրինաց»-ը (Sententiae Syriacae)

Այսակը ավելի մոտից անդրադառնանք ցայսօր քիչ հայտնի «Համառոտ ժողովումն» երկին:

1. Ասորերեն բնագիրը

Դրա հիմքում ընկած ասորերեն բնագիրը գիտությանը հայտնի դարձավ միայն երեսուն տարի առաջ²⁴, 1968 թ. Վալտեր Հելբը ըստ Վատիկանի Syriacus 560 A ձեռագրի հրատարակեց այդ երկի առաջին և 1 հոդվածները²⁵: Այստեղից է սերում նաև «Sententiae Syriacae» բնորոշումը: 1970 թ. Վալտեր Հելբը թարգմանությամբ և ծանոթագրություններով հրապարակեց 102 հոդվածների գիտական ըսագիրը²⁶:

Այդպիսով պարունակում է համեմատաբար կարճ հոդվածներ, որոնք վերաբերում են իրավունքի հետևյալ բնագավառներին. անձնական (ստրկություն և վիճակ, խնամակալություն, մանուկների պատիժ, հովանավորչություն), քննադատական (նշանդրեք, ամուսնություն, օժիտ, երեխա), ընչական (ուսուցում, սեփականատիրություն, փոխատվություն, դրավադրում), պարտատիրական, ժառանգական, դատավարական, պատժական և հասարակական ծառայության իրավունք:

Որևէ կասկածի ենթակա չէ, որ ասորական տարբերակը հետևում է ինչ-որ հունական բնագրի: Արդյոք այս հունարեն երկը սոսկ լատիներենից կատարված թարգմանություն է, կամ թե հորինվել է հենց հունարեն լեզվով, անհնար է պարզել: Այն չի պահպանվել ո՛չ հունարեն, ո՛չ էլ լատիներեն բնագրով: Ինչպես ցույց է տվել Հելբը²⁷, Sententiae Syriacae-ն պարունակում է ոչ թե սովորության, այլ մաքուր հոռոնական իրավունք: Դրանք հիմնականում III դարի II կեսի Դիոկլետիանոսի դարաշրջանի հոռոնական կայսրական հրովարտական նյութերն են: Հոդվածների մեծամասնության համար Հելբը կարողացել է լատիներեն սկզբնաղբյուրներ գտնել, որոնք բերվում են ասորերեն բնագրում՝ բառերի ընտրության և նախադասության կառուցվածքի մեջ: Այն երեք կատարված է ամբողջովին բառական թարգմանություն:

²⁴ Դատաստանագրքի վրացերեն թարգմանությունը գիտե մի ընդարձակ շարք անկանոնությունների հակադիր հայերեն բնագրի, հմմտ. Խ. Թորոսյան. Մխիթար Գոշի դատաստանագրքի վրացերեն թարգմանությունը, տե՛ս Քրեանքի Մատենադարանի, 11, Երևան, 1973 թ. 73—124, հտկ. 123 և հտ.:

²⁵ Sententiae Syriacae. տե՛ս Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte. Romanistische Abteilung. B. 85, Weimar, 1968, S. 400—403.

²⁶ Հմմտ. Kaufhold. Überlieferung, S. 565 և հտ.: Բասմաջյանի կողմից հայերեն բնագրի մասնակի հրապարակումը, որը չի ուղեկցվում թարգմանությամբ կամ համապատասխան ծանոթագրություններով, հրապարակված է համեմատաբար անմատչելի տեղում և անծանոթ է մնացել գիտությանը, Sententiae Syriacae. տե՛ս Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte. Romanistische Abteilung. B. 85, Weimar, 1968, էջ 400—403 (Վատիկանյան ձեռագրի լուսապատճենով):

²⁷ Sententiae Syriacae.

²⁸ Ebenda, էջ 180 և հտ., հատկապես W. Seib. Der Inhalt der Sententiae Syriacae und ihre rechtsgeschichtliche Bedeutung, տե՛ս Akten des 26. Deutschen Rechtshistorikertages Frankfurt a. M., 22 bis 26. September 1986, hrsg. von Dieter Simon, Frankfurt am Main 1987, S. 519—524.

Քե երբ է առաջացել *Sententiae Syriacae*-ի ասորերեն թարգմանությունը, այս հարցը դեռևս բաց է մնում: Շատ հավանական է, որ այն ստեղծել է արևմտասորական եկեղեցու նշանավոր եպիսկոպոս և մտավորական Հակոբ Եղիսացին (ծնվ. մոտ 708 թ.)²⁸,

Sententiae Syriacae-ին հանդիպում ենք միայն արևմտասորական (հակորիկյան) և հայկական մատենագրությունների մեջ: Ասորու-հռոմեական դատաստանագիրքը անժանոթ է արևելասորական (նեստորական) մատենագրությանը: Դեռևս որևէ տեղեկություն չունենք նաև այն մասին, թե այդ բնագիրը թարգմանվե՞լ է արդյոք արաբերեն և վրացերեն, թե՞ ոչ:

II. Հայերեն թարգմանությունը («Համառոտ ժողովուրմ օրինաց»)

1. Ներսես Լամբրոնացու թարգմանությունը ճշտորեն չի հետևում ասորերեն բնագրին, այլ վերախմբագրում է այն: Սկզբում իրար դիմաց դնենք ասորական և հայկական տարբերակների համապատասխան հոդվածների համարները.

Syr.	Armen.	Syr.	Armen.	Syr.	Armen.
1	1	34	35	69	62
2	2	35	36	70	—
3	3	36	16+37	71	—
4	4	37	17+38	72	63
5	20	38	39	73	64?
6	21	39	40	74	—
7	5+22	40	41	75	—
8	—	41	18+42	76	—
9	6	42	43	77	65
10	23	43	44	78	—
11	7+24	44	19	79	66
12	—	45	—	80	67
13	25	46	—	81	68
14	8	47	45	82	—
15	9	48	46	83	69
16	26	49	47	84	70
17	10	50	48	85	71
18	11a	51	—	86	72
19	11b	52	—	87	73
20	27	53	49	88	74
21	28	54	50	89	—
22	12a	55	51	90	75
23	12b	56	52	91	76
24	13	57	53	92	77
25	29	58	54	93	78
26	30	59	55	94	79
27	—	60	56	95	80
28	31	61	—	96	81
29	32	62	57	97	82
30a	14	63	—	98	83
30b	15	64	58	99	—
31	—	65	59	100	84
32a	—	66	60	101	85
32b	33	67	61	102	86
33	34	68	—	—	—

Ակնառու է, որ հայերեն բնագրի թարգմանիչը չի փոխել ասորերեն հոդվածների հաջորդականությունը: Ինչպես ես արդեն նկատել եմ ավելի վաղ լույս տեսած իմ մի հրապարակման մեջ²⁹, նա ստուգել է իր բնագիրը գրեթե ձիւնչ և 44-ը և դուրս է թողել մի շարք պարագրաֆներ (համապատասխան

²⁸ Kaufhold. *Sententiae Syriacae*, p. 511—517.

²⁹ Բյուզանդական իրավունքի այս հոդարձանի ստանձնման մասին տե՛ս նույն տեղում (վերևում, ծան. 2), էջ 607 և հտ.:

խան հողվածների համարները վերևում բերված տախտակում դրված են ձախում), ապա կրկին սկսել է սկզբից և ավելացրել է առանց որևէ բացառության մնացածները, սակայն հինգ պարագրաֆ կրկնվել է ևս մեկ անգամ, այդ է պատճառով, որ դրանք կրկնակի անգամ են բերված Հայերեն բնագրում: Այս վիճակը մի պարզ ասպարեզ է այն բանի, որ, ի հակադրություն Հայերեն բնագրի հերթականության, ասորական բնագրի հաջորդականությունը նախնական է:

Այլ սկզբնաղբյուրներում ևս պատահող նման իմաստային մոտեցում (համեմատելի Ասորա-հռոմեական դատաստանագրքի³⁰ հետ) կարող է իսկապես լինել բնագրի սխառմատիկ համակարգման և իրավունքի բնագավառի համապատասխան հրահանգների դասակարգման դեպքում: Սակայն մեքենոկում պարզ չէ, թե ինչու է խղված նախնական «հերթականությունը» «Sententiae Syriacae» § 44-ը համապատասխանում է «Համառոտ ժողովումն»-ի § 19-ին:

Բացի դրանից ղեկավար է հասկանալ, թե ինչու են կրկնվելով կազմվել հայկական տարբերակի հինգ պարագրաֆները (§§ 7, 11a, 36, և 41): Այդպիսի կրկնական սովանդում դրսևում ենք նաև Ասորա-հռոմեական դատաստանագրքից շեղված տարբերակում, ուր խոսքը վերաբերում է այն որոշումներին, որոնք հետագայ մշակողներից անցնում են մի շարք ձևավորված առարկայական խմբերի և այդ պատճառով դրվում են ըստ իմաստի երկու տեղում: Այն չեմ կարողանում ճանաչել սակայն ոչ «Sententiae Syriacae»-ի, ոչ էլ «Համառոտ ժողովումն»-ի որևէ համակարգ: Հայերեն բառացի բնագրերը շեղվում է թիվ թիվ շատ այդ պարագրաֆներում: Այդ պատճառով էլ ամենայն հավանականությամբ կարելի է ենթադրել, որ թարգմանիչը ավելի ուշ է թարգմանել հատվածը: Շեղումները դուրս են տալիս, որ նա բավական ազատ է վարվել բնագրի հետ, պահպանելով իմաստը: Մեկ օրինակ.

«§ 5. իշխանություն ունի կին առնել կտակ ի վերայ իւր պուուզացն»:

«§ 22. Իշխանություն է կնոջ դեմ կտակ ի վերայ իւր պուուզացն»:

2. Ասորական բնագրերը այսօր զգալի դժվարությունների առջև է կանգնեցնում մեզ: Որոշ տեղերում այն հասկանալու համար պահանջվում է հռոմեական իրավունքի ճշգրիտ իմացություն: Ներսես Լամբրոնացին, որն այդ մասին բնականաբար ոչինչ չուներ իր տրամադրության տակ, ակնհայտորեն այն մասամբ չի հասկանում³¹, նա հաճախ թարգմանում է շատ ազատ և դուրս է նետում բնագրից մի շարք ամբողջական պարագրաֆներ և մասեր: Այդ պատճառով հայերենում պակասում են ասորերեն բնագրի չորս ամբողջական հողվածներ, որոնց մեջ պատահում է չորս «ունեցվածք» օտար բառով: Թարգմանիչը հավանաբար չէր կարող ոչինչ ձեռնարկել: Հետագայում ևս բաց են թողնված պարագրաֆներ «չեծձգւոյն ճնախագիծ», «չեծձգւոյն ճնախագիծ», «չեծձգւոյն ճնախագիծ», «չեծձգւոյն ճնախագիծ» [?] «նա պետք է աքսորվի» և «չեծձգւոյն ճնախագիծ» օտար բառերով:

Ասորական բնագրում երկու անգամ երևում է լատիներեն *furtum* (ψυγρτων «ողողություն») հասկացությունը: Առաջին դեպքում խոսքն այն մասին է, որ մի կին կողոպտում է իր ամուսնուն, և հայերենի թարգմանիչը իրեն անհասկանալի արտահայտությունը փոխադրում է. «նա դադարված չէր փոքրոցով», «ինչպես մի մահապատ», ընդ որում նրան ծանոթ դոգերի մահապատիժը պետք է դրսևվեր հավանաբար ետին պլանում: Երկրորդ դեպքում,

³⁰ Ես այդ խնդրին անդրադարձել եմ Ասորա-հռոմեական դատաստանագրքում, որը նախապատրաստության ընթացքում է:

³¹ Նույն բանը նկատվել է նաև հունարենից թարգմանված էկզոգայում, տե՛ս Martin-Hisard, *Ecloga*, p. 152—156:

անանց հոռմեական իրավունքի հիմնավոր իմացության, շեղվում է իմաստը. մանավանդ որ բառի զրույթունը բոլոր հայտնի ասորական ձեռագրերում եղծված է: Հավանաբար այդպես է եղել նաև թարգմանչի բնագրում, այնպես որ նա այն բաց է թողել:

Թե որքանով է հայերեն թարգմանիչը հասկացել *ya-āstata*՝ «դրություն» բառը, չենք կարող ճշտել: Նա այն ասորու նման ընկալել է որպես օտար բառ, «կատաստասիս»: Համապատասխանաբար է վարվել լատիններեն *custa-tor*-ի (*χοστῶρ* «խսնամակ») հետ՝ թարգմանելով «կուրատոր»: Այս հունարեն բառերը հավանաբար մնացել են անփոփոխ նաև այն պատճառով, որ տրամադրության տակ չի ունեցել ոչ մի համապատասխան բնիկ բառ: Նման ենթադրությունը կարող է ուժի մեջ լինել նաև *deputatus*, *episcopus* և *legatus* բառերի դեպքում:

Իր ունեցած ասորերեն բնագրում վերարտադրված հունարեն օտար բառերի մի ամբողջ շարք թարգմանիչը, սակայն, փոխադրում է միանգամայն համապատասխանաբար. *anagkē* «անհրաժեշտություն, պարտականություն» (կայ հրաման, կայ հարկ, պարտիմ), *propheta* «պիր», *diaconos* «կատակ» (սակայն որոշ տեղերում նաև «տիաթիկ») *gōra* «տուայր», *kyrios* «գող», *nomos* «աւրէնք», *ousia* «ինչք», «ստացուածք» կամ «կամք», *paragē* «սասել», *psalms* «կեղծել» (սուտ կտակ գրել):

3. Մեզ հասած բյուզանդական իրավունքի բնագրերը հունարեն և ասորերեն լեզուներից թարգմանվել են դասական հայերենի, և ոչ թե Կիլիկիայում տարածված միջին հայերեն ժողովրդական բարբառի: Թեև Հովսեփ Կարստը իր Կիլիկյան հայերենի քերականության մեջ ասորա-հոռմեական օրենսգիրքը համարում է մի «գրականություն, որի լեզուն իր արմատներով ժամանակակից ժողովրդախոսակցական ապրող բարբառն» էր, և բերում է նաև բազմաթիվ օրինակներ այս երկից³², այնուամենայնիվ հարկ է նկատի ունենալ, որ նա դրա համար օգտագործում է Բրունսի և Զախաուի հրատարակությունը, որը հիմնված է ուշ շրջանի Բեռլինի հայկ. 56 (դոված 1739 թ.) ձեռագրի վրա, որի մեջ արևելագետ Պետերմանը արձանագրել էր որոշ ընթերցվածներ մի այլ ձեռագրից: Այդ պատճառով էլ Զախաուն եկել է այն հետևության, որ «խոսվածքը ոչ թե դասական, այլ միջնադարյան վանական-հայերենը» պետք է եղած լինի: Նա իհարկե սահմանափակում է այս սահմանում որոշ դիտողություններով, որ «տարբեր ձեռագրեր... կաղապարները միմյանց շատ մերթ քիչ զասականում են ավանդել»³³:

Հիրավի, պետք է տարբերակել հայերեն թարգմանչի գործը ավելի ուշ շրջանի ընդօրինակողների պատճեններից, ուր հառնանդիորեն հիշատակվում են ժողովրդական խոսքի տարրերը³⁴, Դրա փոխարեն, հին ձեռագրերում, մասնավորապես Վենետիկի 1223 և Երևանի 488 մատյաններում, նմանատիպ տղ-դեցությունը հաղիվ է զգացվում: Այնուհետև պետք է նկատի առնել, որ հա-

³² Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1902 (վերահրատարակություն՝ Berlin, 1970), S. 2, հատկապես էջ 7.

³³ Brunns-Sachau. Sylich-örmisches Rechtsbuch, հիշյալ աշխատություն, մաս 2, էջ 162.

³⁴ Դիմչյան արդեն Հայերի Հյուրըման (Armenische Grammatik, Leipzig, 1897 [վերահրատարակություն՝ H. I. I. esheim, 1962], էջ 285, ծանոթ. 8) է ճիշտ նկատել. «Ուղղակիորեն ասորերեն աղբյուրից է սերում... ըստ Զախաուի աշխատության ենթադրության Ասորա-հոռմեական դատաստանագրի [թարգմանությունը]... միջին հայերեն լեզվով, որը մոտ 8-րդ դարին է վերաբերում (ըստ Catalogue des anciennes traductions arméniennes, Venedig, 1869 էջ 755-ի ներսևս լամբրոնացին (Ժի դար) է թարգմանել երկը, որը հավանաբար ավելի ուշ գոհակացվել է)»:

ներևն թարգմանությունը գեղարվեստական գործ չէ, մանավանդ որ թարգմանիչը ըստ երևույթին ոչ միշտ է հասկացել իր ասորերեն բնագիրը:

4. Որոշ հին ձեռագրերում բնագիրն անընդհատ է և գրված է առանց բառերի անջատումների: Դա ուշ շրջանի ընդօրինակողի համար սխալի առատ աղբյուր է, որովհետև այն հաճեցնում է տառերի հեշտ կորստի այն գեպում, երբ բառավերջին և հաջորդ բառի սկզբին երևում է նույն տառը, ընդօրինակություններում նաև ոչ միշտ է ճիշտ գրվում բառերի միջև եղած սահմանը:

5. Ապա պետք է բերել մի քանի օրինակներ առանձին ձեռագրերի (կամ խմբերի) ուշ շրջանի ընդմիջարկություններով: Դրանք սերում են «Համառոտ ժողովումն»-ից: Ասորա-հռոմեական դատաստանագրքի միակ քննական հրատարակությունը և այլ բնագրեր տալիս են քիչ էական այլ օրինակներ:

ա) Ձայնավորներ.

ա) Կիրիկյան հայերենում ա ձայնավորն ընկնում է եռավանկ և բազմավանկ բառերի միջին վանկերում: Մեր ձեռագրերից մի քանիսը ունեն նմանատիպ օրինակներ (հմմտ. մեռնի, պոմնի): Դա իհարկե դժվար է հաստատել, եթե խոսքը չի գնում պարզապես գոչական սխալի մասին: Պետք է նաև նկատի ունենալ, որ որոշ ձեռագրեր դրա շնորհիվ սեղմվում են, այդ է պատճառով, որ զրիչները բաց են թողնում որոշ ա ձայնավորներ:

բ) Հին հայերենում ր-ն հանդիպում է միայն սկզբնահնչյուններում և մնացող կամ ղնացող վանկերի տողադարձերում: Ի տարբերություն դրա այն հաճախակի է հայտնվում միջին հայերենի բնագրերում: Որոշ ձեռագրերում հաճախ հայտնվում է ավելորդ ր այն դեպքում, երբ դրա ուղղագրությունը հետևողական չէ. որոշ ձեռագրերում հայտնվում է պատահականորեն, իսկ շատերում այն բացակայում է:

գ) Է ձայնավորի մասին քիչ է խոսվել. որոշ ձեռագրերում այն հաճախ պատահականորեն դրվում է և ձայնավորի տեղում, երբեմն էլ՝ ընդհակառակը: Այսպես, օրինակի համար, բազմաթիվ ընդօրինակություններ ունեն քն, երև, և րէ, երէ գրությունները: Երբեմն էլ հեշտությամբ կարելի է տարբերակել երկու տառերը:

դ) Ո սկզբնատառ, ինչպես դասական հայերենում, ընթերցվում է վա: Ի տարբերություն հին հայերենի, մեր ձեռագրերում մեծ մասամբ բացակայում է ւ տառը նաև և ո հոլովումներում (օրինակի համար՝ որդոց, տեղոյն):

բ) Երկրարբաներ

ա) Երկրարբառ ալ-ը միջին հայերենում հաճախ բառավերջում փոխարինվել է ա-ով: Յ-ն երբեմն անհետանում է նաև բառամիջում՝ ձայնավորից առաջ: Մի շարք ձեռագրերում բառավերջի ալ երկրարբառը անհետևողականորեն փոխարինվում է ա-ով (օրինակ, ծառա, վերա, դառնա):

Քանի որ ալ-ը և ա-ն միատեսակ են արտասանվում, ապա հաճախակի դրվում է ավելորդ չ հետևյալ բառերում. նոբա(լ), նա(լ), նմա(լ), ապա(լ):

Բառամիջում հազվադեպ է պատահում ավելորդ յ. միայթանի, միայնղամ և այլն: Երբեմն էլ ընդհակառակը, որոշ ձեռագրերում չի դրվում դասական ուղղագրության բնորոշ յ-ն մի շարք բառերի ներսում. օրինակ՝ փեսաին, ծառաութիւն, ծառաեցոյցսնէ կամ վկաութեանն:

բ) Անդրադառնալից նաև ներկարբառ ոյ-ին: Յ-ն բացակայում է որոշ ձեռագրերում. օրինակ՝ իւրո, ներո, կնո:

«Ոյ»-ը կիրիկյան հայերենում բաղաձայնից առաջ կարող է «ու» դառնալ, հատկանշական է E 2885 ձեռագրում հետևյալ բառերի դրությունը. անփութ, զրուց, ասելուն: Դրավորություններ է բացատրվում նաև տոյաբիտ դերձիշա գրությունը տուա(յ)րի փոխարեն:

գ) Ա երկրարբառով է փոխարինվում XII դարում հունարենի ο տառը: Հնադույն ձեռագրերում պահպանվել է ալ գրությունը, որոշ նոր ձեռագրեր

որպես կանոն ունեն օ գրությունը, իսկ մյուսները առանց հետևողականության գրում են ալ կամ օ: Մի շարք ձեռագրերում երբեմն ալ-ի փոխարեն գրվում է Յ նշանը:

Ալ-ի փոխարեն օ գրությունը հանդիպում է նաև ձայնավորից առաջ կամ վերջնականում, թեև այստեղ լ-ը բաղաձայնական է, այնուամենայնիվ մնում է ալ-ի հնչույթային արժեքը: Օրինակ՝ դառառիւն, պարառիւն, գրաւաւն, հասար, մեռօ:

Ճ) Ու երկրարձառը ակնհայտորեն ունի մասնակի բաղաձայնական հնչյունային արժեք: Դրանով կարելի է բացատրել հետևյալ դրությունները. հաշվոյ, հաշտյ, հաշվելն, ստցված, ստացւած, տվողն, տ(ր)ւողն, տվողն և ուրիշներ:

գ) Բաղաձայններ

Ա) Դասական բ-ի արտասանությունը որպես ալ (և ընդհանրապես) իր հետ բերում է այնպիսի ընթերցումներ, ինչպիսիք են ըմպունեն կամ ամբըրշտութեամբ: Դասական ուղղագրության խ-ն կարող է դառնալ դ, այսպես. սղալման(սեռ.), վաղնանել (մեռնել): Դասական ջ-ն դառնում է շ: Օրինակ՝ աճեռոջն: Նրանից է բխում նաև ն գրությունը. ասպնական, ասբնական: Դասական գ-ն առանձին դեպքում դարձել է կ. օրինակ՝ կբէ: Հաճախ գ-ն ն-իդ հետ փոխարինվում է կ-ով. կանկնի, ժառանկել (և այլն), միանկւս կամ նենկութիւն:

Բ) Երևանի 488, 795, և 8926 մատյանները իմաստային տարբերություն են դնում ալլ-ի և ալղ-ի (սակայն, այլև) միջև:

Դ) Դերբայական ձևի դասական -ոդ և -ալ(ոդ) վերջավորությունները երբեմն ամբողջովին կամայականորեն են զործածվում ձեռագրերում: Երբեմն այդ ձևերը տարբերվում են հենց պարագրաֆի ներսում, ընդ որում նման դեպքերում մեկ կամ մի քանի խմբի իրար հետ կապված ձեռագրեր սովորաբար ճշգրտորեն միմյանց համապատասխանում են:

Ե) Պատահում է ինչպես «ոչ» ինքնուրույն, այնպես էլ «չ» ժխտական մասնիկը: Այս դեպքում ևս ձեռագրերը անկանոն ձևով տարբերվում են միմյանցից: Որևէ կերպ չեն տարբերակվում, երբ ընդգծվում է ժխտումը, ևր ժխտվում է ամբողջ նախադասությունը կամ էլ սոսկ մեկ բառ կամ նախադասության մի մասը:

6. Մի շարք բառեր գրվում են զանազան ուղղագրությամբ.

ա) «Քոյր» բառի տարբեր հոլովների համար ձեռագրերում գրությունը ամբողջովին տարբեր է (հաճախ կցվում է վերջածանց «ն» հոդը).

Բ) Եզակի սեռականում (գրաբարում՝ ֆեռ). ֆուերն, ֆուերն, ֆվերն, ֆրուերն, ֆաւրն և ֆաւրզն: Առաջին շորս ձևերը տարբերվում են միայն ուղղագրությամբ:

Գ) Եզակի արականում, կապված «հայր» բառի հետ, «հորաքոյր» (չրաբարում՝ ֆեռ) ձևում ունենք. ֆաւրն, ֆուրն, ֆուրն, ֆերն և ֆուերն գրություններ: Մի շարք ձեռագրերում բարդ բառերում հանգես են գալիս հետևյալ ձևերը. հաւաֆաւրն, հաւաֆուերն (հորաքուերն) և հաւաֆերն:

Դ) Եզակի բացառականը ի նախդիրով (գրաբար՝ քեռէ) հաճախ հանդես է գալիս ֆուրն, ֆաւրէն (ֆուրէն, ֆուրէն, ֆուրվէն, ֆաւրուէ, ֆաւրէն, ֆուրոշէ, ֆեռէ, ֆուրշէ, ֆուերէ, ֆուերէն և ֆուեր ձևերով):

Ե) Հոգնակի հայցականում (գրաբար՝ քորս). քորս, քոյրս, քոյր և քուրս:

Զ) Հոգնակի գործիականը կալվում է «հանդերձ» նախդիրով: Բուն բառը թվում է թե դրված է եզակիով, թեպետ ըստ կապի պիտի սպասվեր հոգ-

⁸⁵ Hans Jensen. Altarmenische Grammatik. Heidelberg, 1959, S. 19 (§ 37); Karst. Historische Grammatik, S. 254 (§ 310).

նակի ձև (դրարարում՝ քերթք (հոգն.), քերթ (եզ.): Հոգնակիում ունենք. փուրբբ, փուրբբբ, փուրբբ, փուրբբ, փուրբբբ, փուրբբբ և փուրբբ: Եզրակիում. փուրբբ և փուրբբ:

բ) Եզրայր բառի ձևերը համապատասխանում են քերականական կանոնին: Միայն եզրակիում և հայցականում «եզրարք» և «եզրարս» դասական ձևերը որոշ ձևադրերում փոխարինված են «եզրայրք» կամ «եզրայրս» ձևավորով:

դ) Δι᾽ ἑξῆς (կտակ) որպես կանոն տրվում է եզրակի ուղղականի համար դործածական «տիաթիկ» ձևով: Դրա հիմքում ընկած ասորական «diyatig» ձևը հնչողությամբ ճշտորեն համապատասխանում է δι᾽ ἑξῆς-ին: Հայերեն ձևը տ սկզբնատառով հիմնվում է նրա վրա, կատարելով արևմտահայերենին հատուկ ձայնափոխություն: Այն շարունակվում է ընթերցվել դիաթիկ: Հունարեն կամ ասորերեն Ո-ի վերարտադրությունը տ-ով (կամ ր-ով) սովորական է: Հունարեն դ-ի («ի» արտասանությամբ) կորուստը բառավերջում համապատասխանում է նաև քերականական կանոնին³⁷:

Սևասկանի ճիշտ ձևն է «տիաթիկ», այն է՝ երկրորդ «ի»-ի անկումով («հնչյունային փոփոխությամբ») և սևոականի «ի» վերջավորությամբ: Որոշ ձևադրերում ևս վերականգնվել է հնչյունային փոփոխությունը. «տիաթիկ»:

Մի քանի ձևադրեր ուղղականում դրում են «տիադիք», ք-ն փոխարինելով դ-ով (բաղաձայնի փոփոխությունից հետո ևս տ է ընթերցվում), իսկ վերջում՝ կ-ն ր-ով: Չնայած ր վերջավորությանը ըստ երևույթին դրիչը այն հոգնակի չի ընկալում, սևականը կաղմելով տիադիքի ձևով:

Դիաթիկ բառն ըստ երևույթին հայտնի է միայն կիլիկյան հայերենին: Ավելի վաղ սկզբնադրյուններում այն գոհես չի հայտնաբերվել: Հայերիս Հյուրշմանի³⁸ և Հրաչյա Աճառյանի³⁹ արմատաբանական երկերում մատնանշվում են միայն կիլիկյան սկզբնադրյուններ: Միաթար Գոշր (մոտ 1200թ.) իր Դատաստանագրքում օգտագործում է միայն «կտակ» բառը: Ժիշտ է երկու տարբերակներից մեկում մեկ անգամ հայտնվում է «տիաթիկ» բառը, սակայն ըստ երևույթին որպես ուշ շրջանի հավելում: «Վասն կտակաց, որ է տիաթիկ», մի այլ տարբերակում: «Որ է տիաթիկ»⁴⁰: Որ հունական բառը պակաս դործածական է, երեսում է նաև նրանից, որ բաղմաթիվ ձևագրեր § 44-ում այն փոխարինում են հայերեն «կտակ» բառով: Հ ձևադիրը դրա համար օգտագործում է «անդարձ» համարժեքը:

Նրբ որոշ ուշ ձևադրերում օգտագործվում է «դիաթիկ» (ուղղական) դրությունը և «դիաթիկի» (սևական) ձևը, չի նշանակում, թե դա բխում է հունարեն կամ ասորերեն բնադրից: Նշանակում է, դրիչը հետևում է արևելահայերենի արտասանությանը՝ «տ»-ն փոխարինելով «դ»-ի: Արևմտահայերեն

³⁴ Hübischmann. Altarmenische Grammatik, S. 256, 226.

³⁷ Նույն տեղում, 331: Ասորերենում ևս վերջին ձայնավորը կարող է ընկնել, նույն տեղում, էջ 287:

³⁸ Hübischmann, S. 346.

³⁹ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Երևան 1971, հ. 1, էջ 666, օգտագործված է միայն Միաթար Գոշրի մի հատվածում:

⁴⁰ Թորոսյան. Միաթար Գոշր, էջ 372 կամ 107, հիմա. նաև Karst. Grundriß II, S. 52 և հտ. ծանոթ. 2 է:

արտասանությունը («տիաթիկ» գրությամբ) արևելահայերենում կարելի է միայն «դիաթիկ» գրությամբ վերարտադրել:

դ) «պոռոգ» (բռնի) — օժիտ:

Մեր սկզբնաղբյուրում «օժիտ» բառի դիմաց որպես կանոն հանդիպում ենք հունարենի τριῖς-ին: Այն հիմնված չէ Sententiae Syriacae-ի վրա: Դրան փոխարինում է ասորերեն pernita-ն (հունարեն՝ περιττός լատիներեն՝ dos): Հայերեն ձևագրերում դրվում է «պոռոգ» ձևը, ուր միայն չ-ի բաղաձայնի ս-ն է ընկած: Դասական հայերենում է փոխարինվում է «քս»-ի, ինչը սակայն «Համառոտ ժողովումն»-ում չի կիրառվում: Այդ պատճառով էլ հնարավոր է, որ հայկական գրությունը բխում է արմատից (հմտ. սեռականը՝ բռն-օժ), իսկ Կ-ի փոխարինումը Գ-ով արևմտահայ արտասանության արդյունք է:

Որոշ ձևագրերում «պոռոգ»-ը օգտագործվում է եզակի ուղղական և հայցական հոլովներում: Հաճախ հայտնվում են նաև հոգնակի ձևերը (ուղղական՝ «պոռոգք», հայցական՝ «պոռոգս»), ինչպես ասորերեն բնագրում, սակայն հստակորեն եզակիի նշանակությամբ: Ըստ այդմ էլ բառն ընկալվում է իբրև անեզական:

Որոշ ձևագրեր ուղղականում օգտագործում են բացառապես եզակի ձևը, մյուսներում պատահում է միայն հոգնակի ձևը: Որոշ ձևագրերում երկու ձևերն էլ կիրառվում են: Վիճակը խճճված է, բանի որ «պոռոգս» ձևը քիչ հասկանալի է: Այն կարելի է հասկանալ ինչպես ուղղական և հայցական՝ եզակի «ս» հավելյալ հոդով, այնպես էլ հոգնակի հայցական: Այդ պատճառով այսուհետև պետք է նկատի ունենալ, որ ըստ Կարստի թերթագրական է հոգնակիակերտ «ք»-ի հոլովման... համընկնումը ուղղականում և հայցականում: Արևմտահայերենում հայցականը (սկզբնապես «ս») սկիզբ է առնում ուղղականից, իսկ միջին արևելահայերենում հակառակ դրան շրջանցվում է «ս» հայցականի, ինչպես նաև ուղղականի վերջավորությունը՝ և արտադրվում է սկզբնական ք վերջածանցը⁴¹:

Սեռականով, տրականով և ներգոյականով բոլոր ձևագրերում բացառապես օգտագործվում է «պոռոգաց» հոգնակի ձևը: «Ոյ»-ից «ու» անցումը (անշեշտ դիրքում) համապատասխանում է դրաբարի հնչյունափոխության օրենքին⁴²: Այս դեպքերում «ու»-ն մնում է պահպանված նաև կիլիկյան հայերենում և, ինչպես սովորաբար լինում է այստեղ, չի թուլանում, փոխվելով «ը»-ի⁴³:

Քանի որ կիլիկյան հայերենում «ոյ»-ը բաղաձայնից առաջ «ու» է դառնում⁴⁴, ձևագրերում մի շարքում են գտնվում նաև «պոռուգն» և «պոռուգ(ս)ն» գրելաձևերը:

Բառն անտարակույս ի սկզբանե վերցվել է Կիլիկիայում՝ հունարենից: Հյուրըմանը⁴⁵ և Աճառյանը որևէ հին սկզբնաղբյուր⁴⁶ չգիտեն: Ըստ հույնա-

⁴¹ Նույն տեղում, էջ 208 և հտ. (§§ 263, 264):

⁴² Հմտ. Jensen. Grammatik, S. 20, 22 (§§ 38, 42):

⁴³ Karst. Grammatik, S. 63, 58 և հտ. (§§ 70, 60)

⁴⁴ Նույն տեղում, էջ 63 (§ 69):

⁴⁵ Grammatik. էջ 374 (№ 353):

⁴⁶ IV 107a.

րակչի առարկայացանկի, Մխիթար Գոշի Դատաստանագրքում բառն օգտագործվում է միայն Ռ խմբագրության 6 և 7 հոդվածներում («պոռոզն» ձևով, տարրերակ «պոռոզն»), ենթադրելի է ուշ շրջանի խմբագրում⁴⁷։ Անտիոքի Ասսիզները դիտեն «պոռոզն» և «պոռոզացն» գրությունները⁴⁸, իսկ Սմբատի Դատաստանագիրքը՝ «պոռոզ»⁴⁹ ձևը։

Ե) Հունարենից սերող «եպիտրոպոս» (ἐπίτροπος = խնամակալ) ավանդված է բաղաձայնի տարրերակներով։ Մի քանիսում հիմնային ձևն է «եպիտրապուս»-ը կամ «եպիտրոպուս»-ը (ընդ որում «աւ»-ով կամ «օ»-ով ռոթված ձևեր մասամբ տատանվում է), մյուսներում՝ «եպիտրոպոս»-ը։ Քանի որ առաջին ձևը մեծ մասամբ օգտագործվում է նաև հին ձեռագրերում, թվում է թե սկզբնական է նաև մեր բնագրում։ Որոշ ձեռագրեր օտար բառը հայերեն են փոխադրում «հոգաբարձու» կամ «կուրա(յ)տուր» տեղանիշներով։ Մի ձեռագրում գտնում ենք նկարագրական հավելագրումներ. «հոգացող եպիտրոպուս» և «եղիարօպուս վերակացու» արտահայտությամբ։

Ռաոն, առաջին անգամ օգտագործվում է կիլիկյան հայերենում⁵⁰։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի առարկայացանկում այն դեռևս չի հանդիպում։ Այդ բառն առաջին անգամ հավանաբար վկայված է մեր բնագրում և ասորո-հոմեական Դատաստանագրքում, ինչն էլ հիշեցնում է ասորերեն սկզբնաղբյուրը՝ «Տ»-ով գրությունը (կիլիկյան հայերենում արտասանվում էր «դ»)։ Հունարենի համար հավանաբար նույնպես էր հնչում, ինչն ընկած է ասորերեն epitropa բառի հիմքում, որի և-ն վերարտադրվել է հայերեն տ-ով⁵¹։

Դ) Նույն տեղում հավանաբար եղել է հունարեն օտար բառ «կուրատուր» (κουράτωρ = խնամակալ), ասորերեն qurator կամ qerator, որը հայտնի չէ հին աղբյուրներին⁵²։

Ե) Լատիներեն legatum (կտակ, ավանդ)-ը հունարենում հնչում է λεγάτωρ։ Այդ պատճառով Հյուբշմանը և Աճառյանը⁵³ բխեցնում են դրան մոտ լիդաաոն λεγάτωρ (խտացիդմուսով) ձևից⁵⁴։ Որքան հայտնի է ինձ, առաջին անգամ բառը հանդիպում է մեր բնագրում և ասորա-հոմեական օրենսգրքում։ Այդ պատճառով էլ հավանական է, որ այն ուղղակիորեն ծագած լինի ասորերեն ligaton ձևից, մասնավորապես որ այստեղ հունարենի ք-ն կիլիկիայում պետք է արտասանված լիներ հայերեն դ-ով։

⁴⁷ Թ ո ռ ո ս յ ա ն. Մխիթար Գոշ, էջ 624 (առարկայացանկ), էջ 309, տող 10, և 310, տող 2, Բժառ. Karst. Sempadscher Kodex, II, էջ 189 և հա. ցիտաված Nat. I. 121* տեղի բոլոր երևույթին մի լրացում է (հմմտ. Karst. Grundriß, I, էջ 400), որը բացակայում է նաև ե. Ռորոսյանի նոր հրատարակությունում։

⁴⁸ էջ 19, տող 15 և 16։

⁴⁹ Տե՛ս հիմնական տեղում Karst. Sempadscher Kodex II 156 և հա.։

⁵⁰ Karst. Grundriß II, էջ 42, այն չի մեջբերվում։

⁵¹ Hubschmann. էջ 286։

⁵² Հմմտ. Hubschmann. S 360 (թ. 224), Աճառյան. Բ, էջ 663ր։

⁵³ Grammatik, էջ 352 և հա. Բ, էջ 282ա։

⁵⁴ Հաստատվում է E. A. Sophocles. A Greek Lexicon of the Roman and Byzantine Periods, New York, 1887, p. 712; H. G. Liddell—R. Scott u. a. A Greek-English Lexicon, Supplement. Oxford, 1968, p. 93a.

7. Ձեռագրերի մեծ թիվը խոսում է այն մասին, որ «Համառոտ ժողովումն»-ը, ինչպես նաև Ասորա-հոմեական դատաստանագիրքը և շրուգանդական ծագման մյուս բնագրերը գործնականում մեծ դեր են խաղացել: Մյուս կողմից դրանք իրենց տեղ-տեղ դժվարահասկանալի բովանդակությամբ հեշտ օգտագործելի չէին: Այս հուշարձանի դատական լեզվում գործածված որոշ արտահայտություններ մեզ ծանոթ չեն: Այն հանգամանքը, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքի տարբեր խմբագրությունների և բազմաթիվ լեզուներով թարգմանությունների կողքին հայտնվում է այս բնագիրը, թույլ է տալիս խոսել այս երկի մեծ նշանակության մասին: Ասորա-հոմեական դատաստանագիրքը թարգմանված է նաև վրացերեն, ի տարբերություն «Համառոտ ժողովումն»-ի:

Գերմաներենից թարգմանեց

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆԸ